ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

23 փետրվարի 2012 թվականի N 6 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Վարչական իրավախախտումներ վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219[1] հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.5-րդ և 1.6-րդ կետերի դրույթները

կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում տարածքային կառավարման մարմնի ենթակայության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի ուսումնասիրության նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Արման Գևորգյան	- Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
Հայկ Փաշինյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ ՏԾ հարցերով վարչության պետի տեղակալ
Միքայել Ղալումյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Միսակ Մելքումյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
Գրիգոր փայտյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ

Սպարտակ Ղուշչյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ

2. Հանձնաժողովին՝

1) ՈՒսումնասիրել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում տարածքային կառավարման մարմնի ենթակայության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը.

2) Նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի քննարկմանը ներկայացնել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի համապատասխան որոշումների նախագծեր:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

23 փետրվարի 2012թ.
ք. Իջևան